

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդում

08.02.2019թ.

(արձանագրություն № 7)

Վավերացնում եմ

ռեկտոր Վարդան Ուռուտյան



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգը սահմանում և կարգավորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի ընտրության միջոցով համալրման գործընթացը:
2. Ամբիոնը Համալսարանի ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Համալսարանի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա: Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ, ստաժոր դասախոսներ և խորհրդատուներ: Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում (այսուհետ՝ Գիտական խորհուրդ), բաց մրցույթի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը: Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է Գիտական խորհրդում՝ սույն կանոնակարգին համապատասխան:
3. Սույն կանոնակարգի ընդունմամբ ուժը կորցրած են ճանաչվում Համալսարանի՝ Ամբիոնի վարիչի ընտրությունը կարգավորող իրավական ակտերը: Եթե նմանաբնույթ իրավական ակտերը կարգավորում են նաև այլ հարաբերություններ, ապա ճանաչվում են մասնակի ուժը կորցրած:

## II. ԱՄՔԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը ձևակերպվում է Համալսարանի ռեկտորի հրամանով, հրապարակվում է Համալսարանում և այլ տեղեկատվական հարթակներում: Հայտարարության մեջ նշվում են առնվազն՝ մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը (այն է՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում):
5. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք, որոնց տարիքը չի գերազանցում 65-ը: Ամբիոնի վարիչի պաշտոնին կարող են հավակնել առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ ունեցող անձինք:
6. Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուների համար գիտական աստիճանի առկայությունը պարտադիր չէ:
7. Ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում Համալսարանին են ներկայացնում՝
  - 1) դիմում՝ ուղղված Համալսարանի ռեկտորին,
  - 2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
  - 3) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
  - 4) քաղվածք աշխատանքային գրքուկից (առկայության դեպքում),
  - 5) տեղեկանք գիտամանկավարժական ստաժի վերաբերյալ,
  - 6) համառոտ ինքնակենսագրություն,
  - 7) գիտական աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը,
  - 8) հավակնորդի գործունեության ծրագիրը (ամբիոնի զարգացման հայեցակարգ):
8. Հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե դիմումը ներկայացվել է այն ներկայացնելու համար նախատեսված ժամկետի խախտմամբ կամ լրացել է հավակնորդի 65 տարին կամ ներկայացվող փաստաթղթերը չեն համապատասխանում մրցույթի պայմաններին:
9. Ներկայացվող փաստաթղթերի անհամապատասխանության դեպքում հավակնորդը հնարավորություն ունի կրկին ներկայացնելու դիմումը և կից փաստաթղթերը՝ մինչև դիմումների ընդունման վերջնաժամկետը:
10. Հավակնորդը կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև Գիտական խորհրդի որոշմամբ փակ (զաղտնի) քվեարկությունը սկսելը:

